**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5**

**ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/31 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

ք.Գավառ «08» հոկտեմբերի 2024թ.
**ժամը 11:00**

**Մասնակցում էին**
**Հանձնաժողովի գնահատող անդամներ՝** Մ.Մովսիսյան /նախագահ/,
Ա. Բոշյան, Ն.Մուրադյան,
**Քարտուղար՝** Ս.Թամամավեյան

**<u>ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/31 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման մասին</u>**
**Մ.Մովսիսյան**

**1)** Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով մասնակիցների կողմից eauction.armeps.am էլեկտրոնային համակարգ ներբեռնած պայմանագրերը պարզեց, որ մինչև սահմանված ժամկետի ավարտը՝ 30.09.2024 թվականը «Նէեմիա Ավակիմյան» Ա/Ձ-ի, «ՖՌԱՆԿՈ ՍՈՒՋԻ» ՍՊԸ-ի, «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ի և «Քանան Ընդ Յան» ՍՊԸ-ի կողմից չի կցվել ոչ մի փաստաթուղթ և չի ներկայացվել պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:***

**2)** «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ **«Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից»:**

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:***

**3)** Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը 3, 16, 17, 18, 19, 21, 23, 24, 25, 28, 29, 30, 35, 36, 37-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:***

**4)** Հիմք ընդունելով վերոնշյալները, գնահատող հանձնաժողովը որոշեց դիմել համայնքի ղեկավարին «Նէեմիա Ավակիմյան» Ա/Ձ-ին, «ՖՌԱՆԿՈ ՍՈՒՋԻ» ՍՊԸ-ին, «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ին և «Քանան Ընդ Յան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառել նպատակով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:***

| ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ | | |
|---|---|---|
| ՆԱԽԱԳԱՀ՝ | | Մ.ՄՈՎՍԻՍՅԱՆ |
| ԱՆԴԱՄՆԵՐ՝ | | Ա.ԲՈՇՅԱՆ |
| | | Ն.ՄՈՒՐԱԴՅԱՆ |
| ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ | | Ս.ԹԱՄԱՄԱՎԵՅԱՆ |